Արձանագրություն N 8

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 24-ի

Օրակարգ

1. Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական խմբի աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվությա ներկայացում

/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու ***Ծ.Հարությունյան/***

2. Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական խումբը Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի ենթախումբ դարձնելու մասին առաջարկի ներկայացում

/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***Ա. Թանաշյան/***

3. <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ներկայացում

/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի օգնական ***Գ.Հայրապետյան/***

4. <<Գենդերային խնդիրները կրթական միջավայրում. դասագրքեր և մանկավարժական մոտեցումներ>> հետազոտական արդյունքների ներկայացում

/ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող ***Ռ. Ծատուրյան/***

5. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Գ.Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ծ.Հարությունյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու
Ջ.Ուիփ	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի համայնքային ծառայությունների բաժնի աշխատակից
Ն. Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ
Մ.Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորիգի վարչության գլխավոր մասնագետ
Գ.Աբրահամյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքականության ծրագրերի վարչության աղետների ռիսկի գնահատման բաժնի պետ
Ա.Մխիթարյան	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ
Ս.Վարդանյան	<<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ
Մ.Մաթոսյան	<<Կանանց աջակցման կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ
Լ.Ավագյան	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի աշխատակից
Հ.Ավետիսյան	<<<Հայկական կարմիր խաչ>> կազմակերպության ներկայացուցիչ
Գ.Շահնազարյան	Կանանց ռեսուրսային կենտրոնի փոխտնօրեն
Ռ.Ղազարյան	Վոլդ Վիժն Հայաստան հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Ի.Հարությունյան	Վորլդ Վիժն Հայաստան գրասենյակի գենդերային հարցերով պատասխանատու
Ռ.Ծատուրյան	ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
Է.Վիրապյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Ս.Երանոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց

	և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար)***

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը և ներկայացրեց օրակարգը: Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը պարոն Բերիկյանը հանձնաժովի անդամներին ներկայացրեց վերջին մեկ տարում հասարակական կազմակերպությունների և հասարակական շարժումների ղեկավարների, ինչպես նաև որոշ քաղաքական ու հասարակական գործիչների կողմից «գենդեր» և «գենդերային հավասարություն» հասկացությունների սխալ մեկնաբանման արդյունքում հասարակության մեջ այդ խնդիրների նկատմամբ ձևավորված ոչ դրական տրամադրվածությունը և արձագանքները: Միևնույն ժամանակ, նա վստահեցրեց, որ ՀՀ կառավարության գործունեությունը գենդրային քաղաքականության իրականացման ուղղությամբ շարունակվելու են:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու Ծ.Հարությունյանը: Նա ներկայացրեց Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից վերջին երկու տարիների ընթացքում ձեռնարկած միջոցառումները, ինչպես նաև այդ խնդրի կապակցությամբ ձևավորված փորձագիտական խմբի աշխտանքները: Ծ.Հարությունյանը տեղեկացրեց, որ Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների երևույթի վերհանման նպատակով իրականցվել են հետազոտություն և ուսումնասիրություններ, ինչի հիման վրա էլ ծավալվել են կազմակերպության հետագա քայլերը՝ օրենսդրության բարեփոխումներ և քարոզչական աշխատանքներ: Ծ.Հարությունյանն անդրադարձավ 2014թ. փետրվարին կայացած հանդիպմանը, որի ընթացքում ներկայացվեց ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունը, խնդրի կարգավորման ուղղությամբ միջազգային փորձը, ինչպես նաև միջազգային փորձագետի կողմից դրա համեմատական վերլուծությունը: Նա տեղեկացրեց, որ խնդրի կարգավորման նպատակով ստեղծվել է պետական, ոչ պետական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից և գիտնականներից կազմված ոչ փորմալ փորձագիտական խումբ: Վերջինս կազմակերպել է երկու հանդիպում և մշակել Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման առաջարկությունների փաթեթ:

Ծ.Հարությունյանը գոհունակության նշեց, որ մի շարք միջազգային կազմակերպություններ, մասնավորապես, Վոլդ Վիժն Հայաստանը, Ամքորը, Օքսֆամը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ-ն, ինչպես նաև

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատրաստակամություն են հայտնել աջակցելու ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած գործընթացին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ առաջարկություններով հանդես եկան Վոլդ Վիժն Հայաստան հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ռ.Ղազարյանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ Ա.Թանաշյանը: Մասնավորապես, Ռ.Ղազարյանը, կարևորելով Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման գործընթացում Հայ առաքելական եկեղեցու դերն, առաջարկեց հոգևորականներին ընդգրկել քարոզչական աշխատանքներում: Ա.Թանաշյանն առաջարկեց Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից ՀՀ պետական բյուջեով յուրաքանչյուր տարի իրականացվող քաղաքացիական ծառայողների որակավորման՝ նրանց գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների մոդուլում նախատեսել Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների վերաբերյալ թեմա:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ա.Թանաշյանը: Նա, հանդիսանալով Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական խմբի անդամ, անդրադարձավ վերջինիս կողմից իրականացրած աշխատանքներին, մասնավորապես, մշակված առաջարկությունների փաթեթին: Ա.Թանաշյանը կարևորելով փորձագիտական խմբի հետագա գործունեությունը, ինչպես նաև հաշվի առնելով այդ խմբում գործընթացին աջակցելու պատրաստակամություն հայտնած կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ գերատեսչությունների ներկայացվածությունը, առաջարկեց վերանայել ստեղծված աշխատանքային խմբի կազմը և այն դարձնել Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովին կից աշխատանքային խումբ: Ա.Թանաշյանն իր առաջարկի նպատակահարմարությունը հիմնավորեց նաև հանձնաձողովի կարգավիճակի, կանոնադրական խնդիրների և գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքների համակարգման տեսանկյունից:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գ.Հայրապետյանը: Նա հանձնաժողովին նախ ներկայացրեց Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելմանն նպատակով իրականացված օրենսդրական բարեփոխումների նախաձեռնության անհրաժեշտության նախադրյալները, մասնավորապես,

անդրադարձավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության, վերարտադրողական առողջության պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համագործակցությամբ իրականացված հետազոտությանը և դրա արդյունքներին, հանրապետությունում առաջիկայում սպասվող դեմոգրաֆիական՝ աղջիկ-տղա հարաբերակցության դիսբալանսին և դրանից բխող հետևանքներին: Այնուհետև նա ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և սահմանված կարգով շրջանառության մեջ դրված <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Նա նշեց, որ համաձայն այդ նախագծերի բուժաշխատողին (բժիշկ, բուժքույր) արգելվում է մինչև հղիության 30 շաբաթը լրանալը ապագա երեխայի սեռի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ եղանակով տվյալներ ներկայացնել հղի կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին (ամուսին, քույր, եղբայր, հայր, մայր, երեխա) կամ երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականությունը կամ այլ բժշկական կամ սոցիալական ցուցումներ: Այդ տվյալների տրամադրումը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից երեքհարյուրապատիկի չափով, իսկ արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

Գ.Հայրապետյանը նշեց նաև, որ օրենքի նախագծերը պարունակում են երկու կարևոր ուղերձ. սեռով պայմանավորված հղիության ընդհատումը վատ արարք է, որը պատժվում է և կառավարությունը կարևորում է առկա հիմնախնդիրը և ձեռնարկում է համապատասխան քայլեր, ինչը ժամանակի ընթացքում կբերի հասարակության վարքագծային փոփոխմանը: Այդ կապակցությամբ նա վկայակոչեց մի շարք երկրների փորձը, որտեղ կիրառել են նման արգելքներ:

Հանձնաժողովի անդամները, մասնավորապես, Ֆ. Բերիկյանը, Ա.Թանաշյանը, Ս.Վարդանյանը, Ի.Հարությունյանը հանդես ելան կարծիքներով և մեկնաբանություններով: Նրանք անդրադարձան նախգծերից բխող բացասական հետևանքներին, կոռուպցիոն ռիսկերին, վերահսկման մեխանիզմների անկատարությանը, սեռի որոշման և հղիության ընդհատման այլ տեխնոլոգիաներին, ինչպես նաև ծնելիության խթանմանն ուղղված սոցիալական աջակցության համակարգի առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը: Հանձնաժողովի անդամները եկան այն եզրակացության, որ օրենքի նախագծերն անհրաժեշտ է քննարկել առավել լայն շրջանակներում և

մշակել հանրապետությունում սեռերի անհամամասնության կանխարգելմանն ուղղված ծնելիության խթանման և կարծրատիպերի վերացման համալիր միջոցառումներ:

Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ռ.Ծատուրյանը: Նա հանձնաժողովին ներկայացրեց իր կողմից իրականացրած <<Գենդերային խնդիրները կրթական միջավայրում. դասագրքեր և մանկավարժական մոտեցումներ>> հետազոտությունը և դրա արդյունքները (հետազոտության համառոտագրությունը կցվում է): Հանձնաժողովի անդամները կարևորեցին հետազոտությունը, դրա արդյունքների լուսաբանումը, հատկապես քաղաքականություն մշակողների և մասնագետների շրջանում:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ծ.Հարությունյանի հաղորդումը:
2. Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ ընդունել Ա.Թանաշյանի առաջարկը, ստեղծել Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովին կից Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական աշխատանքային խումբ, վերանայելով կազմը և ներկայացնելով այն հանձնաժողովի անդամների կարծիքին:
3. Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Գ.Հայրապետյանի հաղորդումը և հնարավորության սահմաններում կազմակեպել օրենքների նախագծերի քննարկումներ և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված տարեկան ծրագրերում նախատեսել համապատասխան միջոցառումներ հանրապետությունում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով:
4. Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ռ.Ծատուրյանը հաղորդումը:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/26.06.2014թ./